Հաստատված է
«ՀԱԿ-ՇՀԾՁԲ-11/2-14/01»
ծածկագրով գնման գործընթացի գնահատող հանձնաժողովի
2014թ. հունվարի 17-ի որոշմամբ

# “ՀԱՅՐԵՆԻՔ-ՍՓՅՈՒՌՔ ԿԵՆՏՐՈՆ” ՊՈԱԿ

Հարգելի մասնակից,

«ԳԱԿ-ՇՀԾՁԲ-11/2» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում “Հայրենիք-սփյուռք կենտրոն” ՊՈԱԿ-ի կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռքբերելու Գնումների աջակցման կենտրոնի և Ձեր միջև կնքված N ԳԱԿ-ՇՀԾՁԲ-11/2- շրջանակային համաձայնագրով նախատեսված ավիասպասարկման ծառայությունը:

Ծառայության մատակարարման պայմաններն են համաձայն առաջարկված պայմանագրի նախագծի:

Հայտնում ենք, որ գնման ծառայության վերաբերյալ Ձեր կազմակերպության հայտն անհրաժեշտ է ներկայացնել Հանրապետության 49 N 9 սենյակ հասցեով մինչև 2014թ-ը հունվարի 21-ը, ժամը $10^{00}$-ը:

Հայտերը կբացվեն “Հայրենիք-Սփյուռք կենտրոն” ՊՈԱԿ-ում, Հանրապետության 49/9 հասցեում, 2014թ. հունվարի 21-ին, ժամը $10^{00}$-ին:

Հայտը ներառում է գնման ընթացակարգին մասնակցելու դիմումը և գնային առաջարկը: Հայտն անհրաժեշտ է ներկայացնել «ԳԱԿ-ՇՀԾՁԲ-11/2–ՀԱԿ-ՇՀԾՁԲ-11/2-14/01» ընթացակարգի հրավերով սահմանված կարգով և ձևերով:

Կից ներկայացնում ենք կնքվելիք պայմանագրի նախագիծը:

Մասնակցի կողմից հայտի ներկայացումը պարտադիր չէ:

Եթե, Հրամանով հաստատված ցանկում ներառված կոնկրետ գնման գործընթացի մասով, Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտով նախատեսված է, որ մասնակիցը Օրենքի 5-րդ հոդվածով նախատեսված պահանջներին իր տվյալների համապատասխանության ապահովման և/կամ գնահատման համար պետք է պատվիրատուին ներկայացնի այլ (լրացուցիչ) փաստաթղթեր և/կամ տվյալներ, ապա նշված փաստաթղթերը և/կամ տվյալները պատվիրատուին ներկայացնում է ընտրված մասնակիցը՝ մինչև կարգի 110-րդ 7)-րդ մասով սահմանված կարգով պայմանագրի կնքումը: Ընդ որում՝

- նման փաստաթղթերի և/կամ տվյալների ներկայացման և գնահատման կարգը սահմանվում է շրջանակային համաձայնագրով՝ հիմք ընդունելով Օրենքի 31-րդ հոդվածի 5-րդ մասի և կարգի 75-րդ կետի պահանջները,
- նման պահանջի դեպքում, մասնակիցներից պահանջող փաստաթղթերի ցանկը և վավերապայմանները, ինչպես նաև մասնակցության իրավունքի և որակավորման գնահատման կարգը պետք է նախատեսված լինի շրջանակային համաձայնագրեր կնքած մասնակիցներին պատվիրատուի կողմից ուղարկվող հրավերով (ծանուցումով)՝ հղում կատարելով Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտի համապատասխան (կոնկրետ) դրույթին ի կատարումն որի պահանջվում են լրացուցիչ փաստաթղթերը և/կամ տվյալները:

Հարգանքով՝

“Հայրենիք-սփյուռք կենտրոն” ՊՈԱԿ-ի տնօրեն

Դ. Շահբազյան

Կատ.՝ Գնումների համակարգող
Ա. Սիմոնյան հեռ 52 02 46